# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**17 նոյեմբերի 2026թ.** **N 680-Ա**

## ՈՐՈՇՈՒՄ
## ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴԻ ԽՃՈՒՂԻ Հ.2/10 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ «ԱՍԼԵՆԴ» ՓԲԸ-ԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴԻ ԽՃՈՒՂԻ Հ.2/10 ՀԱՍՑԵԻՆ ԿԻՑ ԳՏՆՎՈՂ՝ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԵՏ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 32–րդ կետով.

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. Համաձայնություն տալ՝ «Ասլենդ» ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող Ծիծեռնակաբերդի խճուղու հ.2/10 հասցեում /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ. 30032026-01-0453 վկայական/ և տարածագնահատման 5-րդ գոտում գտնվող 1201.0քմ մակերեսով հողամասը (01-006-0619-0052 կադաստրային ծածկագիր) Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Ծիծեռնակաբերդի խճուղի հ.2/10 հասցեին կից և տարածագնահատման 5-րդ գոտում գտնվող 1047.3քմ մակերեսով հողամասի հետ փոխանակելուն:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝** **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

2026թ. նոյեմբերի 17
Երևան